

և նոր աշխարհի հանդէս գալով ամէն ինչ յեղաշրջուած է արդէն և խաւարի բոլոր անգունները միայն լուսոյ արեգակնային պայծառութեան զգացմանը կնպատանեն և մինչև իսկ չարք ստիպուած կլինի միայն բարու զարգացմանը ծառայելու:

Այս բոլորը տարիս է մեզ քրիստոնէութիւնը ուստի և մենք նոյն իսկ փիլիսոփայական տեսակէտից ամենակատարեալ բաւականութիւնը գտնել կարող ենք նորա մէջ: Այս մենք կարիք չունինք նոր կրօնի քրիստոնէութիւնն է իսկական կրօնը:

(Ընթերցողը թող չմոռնայ, որ այսպէս խոսողն Աստուածաբան չէ, այլ 2-րդ դարու նշանաւորագոյն Վերմանական փիլիսոփաներից մէկը):

Սակայն Սիկներ այստեղ կանգ չէ առնում. նա ի նկատի ունենալով ժամանակի և քաղաքակրթութեան փոփոխութիւնը, անհրաժեշտ է գտնում քրիստոնէութեան միջից հանել այն, ինչ որ ժամանակաւոր է, և միայն անմահն ու մնայունը թողնել, որպէս զի աւելորդ հին ձեւերը գայթակղութեան և փորձի քար չդառնան շատերի համար և ստուցեն քրիստոնէութիւնից: Շատ բաներ կրնի մէջ առնւմ է նա շնորհիւ կեանքի քաղաքակրթութեան ու պահանջների փոփոխման՝ երևում են փոքր մարդկային ու ժամանակաւոր այն ինչ որ մի ժամանակ լիովին բուսականութիւն տալ կարող էր բոլոր պահանջներին, այժմ դատարկ ձև է դարձել և պիտի անհետանայ: Քաղաքակրթութիւնը այդ պահանջում է, և պէտք է քայ ճշտաւոր իրերին նայել ու ճշմարտութեան համար կռիւն սկսել: Ի դուր այդ պայքարը շատերին իրեւ կրօնի համար վտանգաւոր է երևում, ընդհակառակն այդ մարտումը առիթ կտայ աւանդական տաղտաժքը նոր եղանակով կազմակերպելու՝ յօդուա կրօնի փոքրագութիւնն ու անհատութիւն է այդ կուռից խոյս տալը: Եթէ մեր անդրդուելի համոզմունքն է, որ քրիստոնէական կրօնի մէջ հոգի որ իրականութեան ամենատարբին յայտնութիւնն է իշխում, այն ժամանակ թող քաղաքակրթութեան աշխատանքի այլ և այլ փոփոխութիւնները մեզ մարդկանց համար աշխատանքի ու հոգսի

դուռ բանան, իսկական գործին նորա միայն օգնել կարող են՝ նրա վեհութիւնը և սքանչելիութիւնը աւելի լուսաւորելով, որովհետեւ մի ճշմարիտ յաւիտենական բան չի կարող ժամանակի մէջ կորչել, այլ նրա մէջ մըտնելով, յաղթում է նրան:

եր. Սր.



### ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԻՐ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՎ ՈՒ ՀԱՄԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Ուրանալ մարդկային բնութեան պաւսաւորութիւնը, աչք գոցել բարոյական ակներեւ մոլութիւնների և ախտերի դիմաց, և, մի և նոյն ժամանակ, վերագրել իրեն մեծամեծ առաւելութիւններ՝ երեւակայել որ ինքը բարոյական գերազանց յատկութիւններ ունի, — այդ տարօրինակ և միանգամայն անըմբռնելի կուրութիւնը այնքան յատուկ է մեր ժամանակի ոգուն, որ իրաւամբ նրա յատկանիշը պէտք է համարել Իրաւ է, չեն պակասել երբէք թեթեւամիտ մարդիկ, որոնք մարդկային բնութեան նկատմամբ ոչինչ չէին կամենում իմանալ, եղել են և մօրի մարդիկ, որոնք զգուշի անտարբերութեամբ դէպի իրենց հոգեկան բարոյական կեանքը՝ գերի են եղել իրենց անասնական հակումներին, անպակաս են եղել անամօթ մարդիկ, որոնք լրբաբար արդարացնում էին մարդկային կեղտոտութիւնները, սակայն այդ բոլորի հետ մէկտեղ ամէնքն էլ վկայել են, որ մարդս կրում է իւր մէջ մի ինչ որ տարբեր՝ մի բնազդ, որը հակառակում է իւր լաւագոյն հատկացողութեան, իւր լաւագոյն եսին, որ այդ բնազդը ծնում է մեղքեր ու յանցանքներ և ընդունակ է արտագրելու անբարոյականութեան այնպիսի ոճիրներ, բարոյական կեանքի այնպիսի այլանդակութիւններ, որոնց հետանկարն անգամ չէ կարող տալ ոչ գրիչը և ոչ վրձինը:

Մեր ժամանակներին միայն վերադա-

Հուսած է մնացել կարծես դանկելու այն գաղափարը, թէ մարդիկ վատ բնազդ- չունին, թէ մեզը, յանցանք ասած բանը դուրս թափելու չունի։ Իրաւ է, մեր ժամանակի մարդիկ այնքան էլ ժպիւրհ չեն պնդելու, զէթ առ երես, որ իրենք չեն չեղում բարոյական օրէնքներէր, որ իրենք անմեղ են։ Բայց հետեւելով նրանց առօրեայ կեանքին՝ նրանց անհատական, ընտանեկան, հասարակական ... բարոյականութեան վերաբերեալ զրոյցներին, դուք ստեղծում տեսնում էք, որ նրանց համար աւելի անմիտ բան չկայ, քան մեզը, յանցանք ասած բանը, դրանք այնքան մանր բաներ են, որոնց մասին չարժէ անդամ մտածել։ Եւ այդպիսիք իրենց ձեռքին պատրաստ ունին բազմազան միջոցներ՝ ոչ միայն թուլացնելու, հաստատելու իրեն անմիտ բան յանցանքի զգացմունքը, այլ և ծածկելու, ուրանալու իրենց բարոյական կեղտոտութիւնները։ Տարօրինակը այն է, որ այդ բարոյական հասկացողութիւնը նկատում է այն չրջաններում, որոնք ինտելիգենտ անունն են կրում։ Իսկ ինտելիգենտ է մեր մէջ իւրաքանչիւրը, որ երբ և իցէ հետաքրքրուել է «հասարակական հարցերով» — և խօսում է գիտութեան անունով։ Բայց թէ որ գիտութիւնն է այդ, որն իրաւունք է տալիս մարդկանց՝ մարդու և նրա բարոյականի մասին այնպիսի անհեթեթ գաղափարներ կազմելու, որոնք հակասում են նոյն այդ մարդու բնութեան — այդ նոյնքան անձանթ մեզ է, որ քան անձանթ է գիտութեան անունով խօսողներին։ Մենք սակայն արամադիր ենք ընդունելու, որ այդ երևոյթը ապականուած միջավայրի և ծայրահեղ թեթեւամտութեան արդիւնք է։ Կարող ենք յիշատի ուրանալ, որ մեզնից շատերը չափազանց թեթեամիտ լինելու պատճառով չգիտեն, թէ որքան չարութեան և յանցադործութեան ստղծեր ենք կրում մեր մէջ։ Ասում ենք թեթեամիտ լինելու պատճառով, որովհետեւ այդ գիտակցելու համար անհրաժեշտ է, որ մենք ծանօթ լինենք մեր բարոյական փիճակին, որ մենք ընդունակ լինենք լրջօրէն մեր մէջ ամբողջութեամբ, մեր ներսը նայելու։

Պէտք է զարմանալ արդեօք, եթէ այն անգիտ զառանիները, որոնք երկուստարգական անկանոն ոգեստութեամբ մղում են տալիս են ինքզինքնին իրենց երեւակայութեան ձեռնածութիւններին, կամ այն ունայնասէր մարդիկ, որոնք իրենց ամբողջ ժամանակը նուիրում են պշրանքին, մոգայի խաղերին, կամայական բարեկեցութեան և ընկերային յարաբերութիւններին, կամ այն ցոփ, անառակ արարածները, որոնք ոչ մի նպատակ չունեն, եթէ ոչ զգայական դուրս ձեռնութիւնները, — պէտք է զարմանալ արդեօք, ասում ենք, եթէ այդ կարգի և միջավայրի մարդիկ՝ հանգիստ խղճով և ինքնաբաւական կերպով, պատուաստել կարող են իրենց ուղեղին այն ցնորամիտ համոզումը, թէ իրենք մեզը չեն դործում, թէ իրենք բարոյական մարդիկ են։ Ե՞րբ են դրանք ժամանակ ունեցել, որ աչք ձգէին իրենց ներսը՝ տեսնելու իրենց բարոյական խակական դրութիւնը, ինչպէս կարող է այն ազմուկը, որով չըջատուած են նրանք, թոյլ տալ որ լսելի լինի խղճի ձայնը, որանկողմերցնեն այն լրջութիւնը, որն անհրաժեշտ է իրենց ներքին եսի նկատմամբ հիմնաւոր դատմունք կազմելու համար։ Անգիտակ իրենց բարոյական պակասութիւններին, ունենալով դրսից «պատուաւոր» գիրք, վայելելով «հասարակութեան» յարգանքը՝ բնական է, որ դրանք այն խելագար կարծիքը կազմեն, թէ իրենք իրօք լաւ մարդիկ են, բարոյական մարդիկ են։ Եւ դուք դրանց դէմքի վրայ կարող էք կարգաւ, որ նրանց ոչինչ բան հոգս չէ պատճառում՝ առաւել նուազ այն միտքը, որ իրենք բարոյական կեղտոտութիւնների տէր են։ Եւ եթէ կան դժբախտ մէջ ոմանք, որոնք կրում են տակաւին իրենց մէջ ամօթի զգացմունքը, որոնք ընդունակ են իրենց արարմունքների վրայ վրդովուելու՝ դրանք էլ այդ վրդովմունքը փարատելու համար, ընդհանուր հոսանքի ազդեցութեան տակ՝ տալիս են ինքզինքնին ցրտածութեան, խառնում են մի կարգ «զբաղմունքներին» մէջ, որոնք պահանջում են նրանց ամբողջ ուշադրութիւնը — Եւ փորձեցէք մի քանի անգամ անտարբեր կե-

նալ ձեր բարոյական անկման համար բո-  
ղոքող ձեր բնութեան աղետադոյն մասի  
զգաստացումների գէժ՝ դուք կհաշտուիք  
ձեր բարոյական վիճակի հետ, և ձեր հա-  
կումներն ու տենչերը կշարունակեն՝ անար-  
գել իրենց նուաճումները, առանց մի որ և է  
ներքին հակառակութեան:

Այդ անտարբեր և մահառ փերաբեր-  
մանքը գէշի մեր բարոյական կեանքը և  
հասկացողութիւնները՝ յանդում է սովորա-  
բար այն հետեւանքին, ինչպէս ասացինք, որ  
մենք ոչ միայն համակերպուած ենք իրերի  
գրութեան, գնումներ՝ այնպէս, ինչպէս իրերն  
են գնում, այլ և, որ սոսկալին է, արդարաց-  
նում ենք հազար ու մի սոփեստութիւններով  
այն բարոյական աղտեղութիւնները, որ ըն-  
դունակ է արտաթորելու մարդ — արարածը:

Մենք չենք կարող, հարկաւ, խօսել  
այստեղ մարդկային այն կեղտոտութիւն-  
ների մասին, որոնք կատարուած են՝ մեր  
ժողովուրդի ամէն խաւերում: Բայց ով մի  
քանի ժամանակ ապրել է Բագուում՝ և հե-  
տաքրքուել է հասարակութեան բարոյակա-  
նով՝ նա տեսած է կլինի այդ բարոյական կեղ-  
տոտութիւնների կենդանի լուսանկարը: Այդ-  
տեղ տեղի են ունենում շարունակ բարոյա-  
կան այնպիսի տեսարաններ, որոնք ցնցում են  
մարդու ջղերը: Եւ աղտեղութիւններ կատա-  
րուած են ազատ ամէնքը՝ սկսած գալոցական  
աղայից՝ մինչև հասակաւորը, ամուսնացածը,  
սկսած բանւորից մինչև գործարանատէր  
բուրժուան, — ինչպէս ծնողը՝ այնպէս էլ զա-  
ւակը՝ «թերթեցէք մեր՝ ընտանեկան — ա-  
մուսնական կեանքի վերաբերեալ եկեղեցա-  
կան մատենաները, և կտեսնէք թէ ինչե՛ր է  
կատարուած մեր քաղաքում» — ասում էր այդ  
քաղաքի նախկին հայր գործակալներից մէկը:  
Եւ ապրելով Բագուում՝ դուք հանգիստտես  
էք լինում արդարեւ իրական դրամաների Իսկ  
եթէ մի հասարակութիւն արհամարհում  
է, սոսկալիս է անում ընտանեկան բարոյա-  
կանութիւնը, որից պէտք է բղխեն մեր միւս  
բոլոր բարոյական առաքելութիւնները՝ դժ-  
ուար չէ մակարեբել, թէ ինչ հասկացողու-  
թիւններով պիտի խմբուած լինի նրա ու-  
ղեղը անհատական, ընկերական յարաբե-

րութիւնների՝ բարոյականութեան վերաբեր-  
մամբ: Եւ բարոյական այդպիսի կենցա-  
ղավարութիւնը, չնորհիւ այն դիրքի, որն  
ունի Բագուն մեր հասարակական կեանքի  
մէջ, տարածուած է երկրի ամենախա-  
ւար անկիւնները: Նա ներկայացնում է մի  
հրաքուխ, որը դուրս է վիժում բարոյա-  
կան մահ և սրածութիւն:

Այդ երեւոյթը ինքն ըստ ինքեան ողբալի  
է, բայց ոչ անբուժելի, երբ գիտես, որ  
մարդիկ գիտակցում են իրենց բարոյական  
անկումը, զգում են, թէ և լուռ կերպով, որ  
այդպէս չպէտք է ապրել, և, ի պահանջել  
հարկին, ամէն ջանք գործ կդնեն որ միւս-  
ները (անխորձ, երիտասարդը, մերձաւորը,  
զաւակը ...) չերթան նոյն շաւղով՝ ամբա-  
ցնելով նրանց բարոյական առողջ հասկա-  
ցողութիւններով և լուրջ աշխարհահայեցո-  
ղութեամբ: Սակայն խնդիրը բոլորովին այլ  
կերպարանք է ստանում, երբ մարդիկ վերը  
սկնարկած կենցաղավարութիւնը իրեն խնկա-  
կան կեանքն են ընդունում և գիտակցաբար  
գնում են այդ կեանքով: Ուրիշ խօսքով,  
երբ մարդկանց բարոյական հասկացողու-  
թիւնները այլասեռուած են: Յաւելով պէտք  
է նկատել, որ մեր ժողովուրդի մեծագոյն  
մասը՝ երիտասարդ սերունդը, որն ինտե-  
լիգենտ անունն է կրում, բարոյականու-  
թեան նկատմամբ բոլորովին այլասեռուած  
հասկացողութիւն ունի: «Բարոյական», «Բա-  
րոյականութիւն» նրա համար բառախաղեր  
են, որոնք տեղին և պարագային նայելով  
պէս-պէս դոյներ են առնում: Նրա համար  
խօսապէս բարոյականութիւն չկայ. «ամեն  
բանի ձգտիր բացի բարոյականութիւնից» —  
այդ է կարծես նրա նշանաբանը: Լաւ բա-  
ղաբացի, պարտաճանաչ պաշտօնեայ, հա-  
տարակական, գրական «գործիչ» լինելու հա-  
մար բնաւ պէտք չէ, որ մարդիկ բարոյա-  
կան լինեն. հայրենասիրութիւնը, մարդա-  
սիրութիւնը երբէք կապուած չէ բարոյա-  
կանութեան հետ, մարդ կարող է «իդէա-  
լիստ» լինել, բայց մի և նոյն ժամանակ ան-  
բարոյական՝ բարբառում է թեթեւագլուխ  
խտեկիզկետը, բարոյականութիւնը ինքնին  
մի պայմանական բան է, որ մարդ կա-

բող է ունենալ և չունենալ. մարդկային քաղաքակրթութեան զարգացման համար բարոյականութիւնը ոչ մի դեր չունի խաղալու։ Այս մարդոց հասկացողութեամբ մարդ պէտք է նոյն իսկ անբարոյական լինի, եթէ «հանգամանքները» պահանջում են այդ։ Եւ այդ պատճառով իրենց բարոյական թերութիւնների, իրենց կեղտոտութիւնների համար պատասխանատու չեն ուղղում ճանաչել իրենց. այդ պակասութիւնները իրենց բնութեան թոյլ կողմն է, իրենց խառնուածքի սատկութիւնը. մարդկանց կեղտոտութիւնները պէտք է վերադրել հանգամանքների բնութեան՝ հզօր, ամեն բանի իշխող անհրաժեշտութեան և շարժառիթների չղթայումին։ Այդ տակաւին յարեաց փոքրագոյնն է։ Կան այլ «դպրոցի» մարդիկ, որոնք բարոյական թերութիւններ ու կեղտոտութիւններ չեն ընդունում, որոնք մարդկային մոլութիւններն ու ախտերը ոչ յանցանք են համարում և ոչ դատապարտելի, այլ կարեւոր «ֆակտորներ», անհրաժեշտ յարակից հանգամանքներ մեր բնութեան հետ։ զհետէ զարգացման համար։ Ուրիշ խօսքով, անբարոյական օշինչ չկայ, չկայ մեղք ու յանցանք. մարդկային բնութիւնը կրում է իւր մէջ ձիւղեր և բնազդներ, որոնք անարգել պէտք է զարգանան. մարդկանց բարոյական խտորումներն ուրիշ բան չեն, եթէ ոչ ազնիւ ուժերի գործունէութիւններ՝ այդ ուժերի կարեւոր փրկարար փորձերը — ուժեղանալու և կերպաւորուելու համար։

Ահաւասիկ ժամանակիս ինտելիգենտ երիտասարդների սիրուն ֆրազները, նոցա կազմած տեսակէտները բարոյականութեան նկատմամբ։ Եւ այդ տեսութեամբ չէ, որ այդպիսի բարոյական ընկժօրները (ПОДЖОРИ) իրենց եսամոլութիւնը համարում են խելացի ինքնասիրութիւն, իրենց անգթութիւնները — արդար խստութիւն, իրենց անյազարգ փառասիրութիւնը — ազնիւ ձգտում՝ դէպի բարձր... և միթէ այդ տեսութեամբ չէ, որ անառակութիւնը ու պոռնկութիւնը հակումների օրինական գոհացում են համարում... Բայց այդ բոլոր սովեետութիւնները՝ սովեետութիւններ, որոնք իրենց մտքի և համոզ-

մունքի ծնունդ չեն՝ մեծ մասամբ այն նրա պատակն ունին, որ ծածկեն իրենց բարոյական գարշելի գէմքը՝ արդարացին իրենց զգուշի տխտերը։ Այդ է իրողութիւնը։ Ապա թէ ոչ, միթէ հնարաւոր է ուրանալ մեր պակասութիւններն ու օճիրները, կարելի է ասք գոցել այն զարհուրելի, հանրատեսի գործերի դիմաց, որոնք երեւան են հանում մարդիկ կոչուած արարածները՝ բնութեան այդ «պատկները»։ Եւ այդ չէր հերքի ինքն իրեն, չէր հակասի իրականութեան, մեր անձնական ներքին փորձառութեան։ Ապա, ինչ հետեանք կարող է առաջ դալ, եթէ մենք մեր բնութեան կատարելութիւնը ապացուցանել, կամ մեր բարոյական թերութիւնները պէտքէս իմաստակութիւններով բացասել կամենայինք։ Մի կտոր առողջ գատողութիւն պէտք է, բարոյական գիտակցութեան մի շող՝ խելամոելու համար, որ մարդ որքան ջանքեր գործ դնէ ծածկելու կամ ուրանալու իւր բարոյական մոլութիւնները՝ այնքան հակասութիւնների մէջ պէտք է ընկնէ ինքն իրեն հետ, իւր սրտի և խղճի հետ։ Մի որոշ ժամանակ կյաջողութիւն նրան հարկաւ ուրիշ կերպ ներկայացնել զինքը, քան որ է, բայց այդ միշտ հնարաւոր կարող չէ լինել։ Եւ քան էլ նա անփոյթ դըտնուի և բանդադուշանքների երերման մէջ չկամենայ տեսնել իւր բարոյական խեղճութիւնը, այնու ամենայնիւ կզգայ այդ ժամանակի ընթացքում կանհետանայ բանդադուշանքը, կմտնէ դրա տեղ խաւար լրջութիւնը, և նոյն իսկ զրօսանքների և զուարճութիւնների ժամանակ կբողբէ մի անգամ նրա խիղճը, սիրտը՝ կշարժէ նրա մէջ մի անգամ երկիւղի և ամօթի զգացմունքը և կզարթեցնէ բարոյական գիտակցութիւնը։ Նա կեղծ ու պատիւր փրկիտփայութիւններով չէ կարող միշտ իւր կեանքի համար ընթացքում և հանգամանքներում արդարացնել, և չվերադրել իրեն իւր ապօրինի և մեղսական գործերը. մտքի և սրտի լուրջ կշռադատութեան ժամերում, վշտի և կարկքի ճնշման տակ, մահուան անկողնում — անզօր պիտի լինին այդ իմաստակ փրկիտփայութիւնները հաշտեցնելու իւր սիրտը իրականութեան և

եղերութիւնների հետ: Նա պիտի գիտակցէ, որ ինքը մի կայր գործիք չէ շրջապատող կեանքի և երևոյթիւնների մէջ, և այդ կեանքի և երևոյթիւնների՝ նոցա շարժառիթների, լսկարողները չէ, այսպէս ասած, կղկղանքը չէ, այլ ինքնուրոյն՝ իւր անկախ գոյութեան իրաւունքն ունեցող մի տարր է, ընդունակ կրօնելու, ազդելու և ազդուելու, յաղթելու և յաղթուելու, իր մարմնական ու բարոյական կեանքը պահպանելու և կորցնելու: Եւ եթէ ինքն այսօր սատկած ձուկի պէս լողում է ձրի հոսանքով, ոչ թէ նրա համար է այդ, որ ձրի հոսանքը զօրեղ է, այլ որ ինքը բարոյապէս սատկած է:

Հալարտացէք ձեր բարեմասնութիւններով, գո՛ւք, որ ինտելիգենտ անունն էք կրում, սիրաճեմ առաջ գնացէք ձեր բարոյական սիրազօրծութիւնների մէջ և, յանցանքի զգայմունքը խաւար ժամանակների նախապաշարում համարելով, գով կարդացէք մարդկային բնութեան կարծեցեալ առաւելութիւնների մասին. արհամարհական քրքիջ արձակեցէ՛ք նրանց վրայ, որոնք կռոււմ են իրենց ներսը և գուրսը բարոյականութեան համար և անբարոյականութեան գէմ, առարկելով թէ ամեն ինչ բնութիւնն է արտադրում՝ մաքրութիւն և աղտեղութիւն, և եթէ մէկի մէջ այս է երևան գալիս և միւսի մէջ այն, այդ բնութեան տուածն է և մարդկանց ակորժակի խնդիր է: Բայց այդ իմաստութիւններով երկար չէք կարող գառանցել, տեղատուութեան և յարգութեան ժամեր պիտի գան, երբ ձեր հոգու խորքը լուսոյ մի շող կ'թափանցէ և գիտակցել կտայ ձեզ, որ ձեր ամբողջ կեանքը մի մարդկային ծաղրանկար է՝ գիւլային գիմադներով: Դուք պիտի շոշափէք ձեր ներսը մի ինչ որ խլրտում, որը ձեզ հանդիսա չէ տալիս, վրդովում է ձեր սիրտը, ձեր հոգին՝ ձեր խիղճը, որի ձայնը դուք հաւանօրէն՝ երբեմն պատրոզ, խաբող զգայմունք էիք համարում, կամ ձեր խառնուածքի թերի կազմութեան հետեւանք: Այն, դուք պիտի զգաք, որ ձեր ամբողջ ներքին աշխարհը շարուհակ և անդադար մաքառումն է լաւի և վատի, իրաւի և անիրաւի մէջ՝ մի երկուու-

թիւն, որը՝ տեսականօրէն հերքեցէ՛ք որքան կամենաք, միշտ պիտի մնայ անուրանալի մի երևոյթ՝ նկատուած և՛ փոքր ժողովուրդներին և՛ մեծ ազգերի կեանքի մէջ, և՛ անցեալի և ներկայի մէջ:

Որքան էլ արեքցած լինինք ներկայի գեղեցկութեամբ, որքան էլ կարծենք, որ մենք բաղդաւոր ժամանակների մէջ ենք ապրում, ուր շուտով գային ու ոչխարը միասին պիտի ճարակեն, «հաւասարութեան» և «եղբայրութեան» գրօշները պիտի ցցուին շէնքերի կատարների վրայ, — այսօր էլ շարունակում է թագաւորել նոյն երկուութիւնը: Անթիւ բնտանիքների մէջ իշխող քայքայումը և տառապանքը, բարքերը թունաւորող և ժողովուրդների ոյժը լափող յղժութիւնը, ամենուրեք երևան ելնող և ամէն օրէնքներ ոտնատակ անող ոճիրները՝ այն անըմբռնելի թեթեամտութիւնը, որով մարդկանց մեծագոյն մասը առաջնորդւում է իւր կեանքում, ընդհանուր մարդկութեան մէջ նոր ինորոյ կրկնող անկումները, վայրենի անկարգութիւնները և ջնջումները, թշնամական և արիւնտ ապտերազմները և յեղափոխութիւնները, — այդ բոլորը վկայում են, որ մարդու բնութիւնը կրում է իւր ներսը յիրաւի մի ինչ որ տարր, մի բացասական ոյժ, — ինչպէս կուզէք անուանեցէք, — որը կարծես ընդմիշտ ուղեկից է նորան իւր զարգացման և գոյութեան ընթացքում: Մի ճշմարտութիւն է այդ, որը հերքելու համար պէտք է անտես անել կեանքը և փորձը: Այդ իրողութիւնը մեկնել միայն հացի և դոյուութեան շարատանջ խնդրով խիստ միակողմանի է, և ընդունելով անգամ, որ ճիշտ է, այնուամենայնիւ իրողութիւնը մնում է իրողութիւն: Եւ ինչ նպատակ կունենար կեանքը, եթէ այդ իրողութիւնը չլինէր և չթափանցէր մեր գիտակցութեան մէջ: Միթէ պէտք կայ ապացուցանելու, որ հերքելով շարութեան և բարութեան կոչւր, ուրանալով մեր բարոյական թերութիւնները, պատասխանատուութիւնը՝ վնասում, մահուան դատաւճիռ ենք կարգում ժողովրդի գերագոյն շահերին, նրա գոյութեան ապահովութեանը: Նրա գոյութեան ապահովութեանը, — որ մենք

բարոյապէս թերի ենք, որ մենք կրում ենք մեր մէջ մալութիւնների և ակտերի տրամադրութիւն՝ յանցանքի և մեղքի զգացումներ, — մի թէ այդ գիտակցութիւնը չէ միայն, որ պիտի դրդէ մեզ բարոյապէս բարձրանալու, ազնուանալու՝ հուման բնութիւն ստանալու։ Այդ գիտակցութիւնը չէ, որ առաջ պիտի բերէ մեր մէջ զգացումների, բարոյական հասկացողութիւնների, ցանկութիւնների յեղաշրջում և բարեփոխում։ Կարող է բարոյական կեանքի մասին խօսք լինել, հնարաւոր է բարոյական կեանքի ձգտումը, եթէ մենք չընդունենք, որ բացի մեր ուսմանն ու մարմինը խնամելու՝ պէտք է խնամենք և մեր սիրտն ու հոգին, որ մենք այնքան էլ գեղեցիկ զանգուածներ չենք, որոնց պէտք է միայն փայտայել, այլ կոշտ ու պոշտ մարմին ենք, որը շարունակ ողորկելու, մշակելու, կրթելու հարկի մէջ ենք դառնում։ Կարող ենք մենք քննարկել, կենդանի զգացումներ ունենալ բարոյականութեան և մարդկային բնութեան համար՝ հիանալ և ոգևորուիլ մարդկային իդէալներով, եթէ մենք գոհ ենք նորանով, ինչ որ ենք և ունինք։

Սրանք հարցեր են, որոնք հասկանալի են բարոյական մարդուն, բայց ... ոչ մեր երիտասարդ սերնդին, որովհետեւ նա անբարոյական է բառիս ամենալայն առմամբ։ Այն զղուելի անտարբերութիւնը, որով նա համակուած է դէպի ամէն բարոյական դադարաւորներ, այն ցեխը, որի մէջ նա խրուած է մինչև կոկորդը՝ ընթացել է նրա ընդր բարոյական զգայարանները, նրան օտար է բարոյական կեանքը, անբարոյական է բարոյական կեանքի գեղեցկութիւնը, նա անբարոյականութեան ցեխի մէջ է դառնում կեանքի խորհուրդը և այդ ցեխի մէջ է որդնում իւր կեանքի և՛ փայերը և՛ իդէալը։ Սակայն այդ ցեխը թոյն է բերում, թոյն, որ կաթէ կաթ ծորում է մեր ժողովրդի երակների մէջ՝ նրա ամբողջ կազմը վարակելու և քայքայելու համար։ Մի ժողովուրդի բարոյական անկումը նաև նրա ֆիզիքական անկման նշանն է, ժողովուրդի գոյութիւնը ապահովուում է նրա բարոյական կենսունակութեամբ և դի-

մացկունութեամբ։ «Առողջ կազմաւածքի, առողջ ուղեղի և երակների տէր մարդը կունենայ առողջ գիտակցութիւն, առողջ հայեացքներ, առողջ իդէալներ։ Եւ այդ օրէնքը ամէնքը կարող են ստուգել նայելով իրանց շուրջը, դիտելով այն ընդհանուր ֆիզիքական ու բարոյական այլասեռումն, որ կանխէ մեր «նաեղիւղենա» կոչուած դասակարգը»։ \*

Այո, մեր ժողովուրդը բարոյապէս և ֆիզիքապէս այլասեռուած է, աւելի, քան մենք կարծում ենք։ «Պէտք է կոյր լինել, ասում է նոյն յարգելի հեղինակը, շտեմելու համար այդ արագ դուրսում, ազգային տոկոսն դիմացկունութեան փլատակուելը՝ կեղծ քաղաքակրթութեան ազդեցութիւններից։ Ազգերի ֆիզիքական կորստեանը առաջնորդում է բարոյական այլասեռումն, այո, ազգային ոգու, աւանդութիւնների, դարերով փայփայած ու մշակած գանձերի կորուստը ազդութեան կորուստի առաջաւոր երեւոյթներն են։ Երբէք մեր երկար պատմութեան ընթացքում մեր ցեղը այսչափ մօտ չէ եղել ջնջման և երբէք մեր ժողովրդի բարոյական մակերեւոյթը այնքան ստորացած չէ եղել, ինչպէս այսօր, այն ինչ նա չէր կարող այնչափ բարձր լինել, որչափ այսօր»։

Արդեօք այդ երեւոյթը անտեսական պայմանների արդիւնք է։ Կան մարդիկ, որոնց միամիտ հասկացողութիւնը այդպէս է ըմբռնում. կան և մարդիկ, որոնք «իրերի բնական ընթացքն է» ասելով և ուսերը թութուելով անցնում անտարբեր դնում են... և քչերը կդառնան, որոնք ընդունակ լինելին թափանցելու խնդրի խորը՝ դառնելու համար, որ այդ անկումը մեծ մասամբ ծագում է ոչ այնքան արտաքին պայմաններից, որքան այն ներքին այլանդակութիւնից և ապականութիւնից, որով փայլում է և ժամանակակից սերունդը իւր հոլանի մերկութեամբ՝ այն աշխարհահայեցողութիւնից, որն ունի նա կեանքի և նրա նպատակի մասին։ Անհատի, ինչպէս և ժողովրդի բոլոր

\* Վահ. Արծրունի, — Ամուսնութիւն

բարոյականութիւնը, ասում է Հարաման\*, էապէս կախուած է այն տեսական աշխարհահայեցողութիւնից, որն իշխում է թէ՛ անհատի և թէ՛ ժողովրդի վրայ, և առաւելագոյն այն օրէկաւ նպատակներից, որոնք կրում են իրենց մէջ մարդկութեան գործունէութիւնները: Փրկստօվայի այդ խօսքերի ճշմարտութեան լաւ իրազեկ պէտք է լինին մեր թեթեալ դրութիւնը հրապարակախօսները, որոնք ոչ մի առիթ բաց չեն թողնում ծաղրելու ժողովրդի նահապետական բարոյականութիւնը՝ նրա հաւատալիքներն ու իդէալները, առանց կարենալու դրանց փոխարէն լաւագոյնը դնել, բայց և առանց կարենալու մի անդամ գէթ ցոյց տալ, թէ այժմեան երիտասարդութիւնը իւր մտաւոր հարստութեամբ հանդերձ ինչ բարոյական առաւելութիւն ունի՝ ինչ է նրա աշխարհահայեցողութիւնը կեանքի վրայ, ինչ իդէալներ է կրում նա իւր մէջ և ինչ է որոնում ժողովրդների ձգտումների մէջ: Ամենալաւատեսն անդամ, կարծում ենք, պիտի ծիծաղէր մեզ վրայ, եթէ մենք մեր ժողովրդի, մեր երիտասարդ սերնդի ձգտումների մէջ որ և է նպատակ որոնելիք, եթէ մենք այդ նպատակներին բարոյական արժէք և բովանդակութիւն վերագրելիք: Որ իրերը և երեւոյթները որոշ նպատակով են ստեղծուած և դէպի այդ նպատակը զարգանալու ու կերպարանաւորուելու կոչումն ունին, որ մարդն էլ, այդ երեւոյթների գերազոյնը, նոյնպէս իրեն յատուկ կեանքն ու կոչումն ունի, և այդ կեանքը իւր պէս-պէս ձեւակերպութիւններով և կերպարանաւորութիւններով ուղղուած է այն բանին, որ աւելի ու աւելի հասունացնէ, երեան հանէ նրա մէջ իսկական մարդկայինը, մարդու կատարեալ էութիւնը՝ այդ հասկացողութիւնը ժամանակակից սերնդի համար գոյութիւն չունի: Նրա համար կայ մի ուրիշ հասկացողութիւն՝ այն միայն, թէ մի անիմանալի զուգահիւսութեամբ իրերը ստացել են ներկայ ընթացքը, և ո՞վ գիտէ թէ ո՞ր է գնում այդ ընթացքը: Կեանքը հեռական կերպով ներ-

կայանում է նրան իբրեւ աննպատակ մի թատերախաղ, ուր միակ շարժիչ զօրութիւնը «գոյութեան կռիւն» է իւր անողորմ կերպարանքով, ուր հերոս է հանդիսանում նա, որն ուժեղ է և հարկւրաւորների գոյութեան գնով պահպանում է իւր գոյութիւնը: Այդ հասկացողութեան մէջ բարոյականութեան (ընդարձակ մտքով) դադափարի համար այլ ևս տեղ չի կարող լինել: Նա չի կամենում հասկանալ, թէ իւր ներքին աշխարհը, որի համար մտածելու ոչ ժամանակ ունի և ոչ տրամադրութիւն՝ աւելի արժէքան այն բոլորը, դէպի որը, յանուն գոյութեան կռուի, արբշիւ կերպով դիմում է: Նա չունի նոյն իսկ մի աշխարհահայեցողութիւն, որը յարգել տար ինքզինքը և պահպանէր նրա մէջ այն դիտակցութիւնը, թէ իւր գոյութիւնը պայմանաւորուած է իւր բարոյական կեանքով, իւր անձնաւորութեան արժանապատուութեամբ: Այդպէս լինելով, նա հեզնում է՝ ամէն նրանց, որոնք տարբեր հասկացողութիւն ունին կեանքի և իրերի մասին: Եւ հեզնելով ամէն ինչ՝ նա կորցրել է և որ և է բան յարգելու ընդունակութիւնը, առաքինութիւնը, բնականը, հայրենասիրութիւնը, պատիւը, կրօնը՝ բարոյական գաղափարներ, որոնք, պէտք էր ենթադրել, իբրեւ ամենամեծ և ձգտելու արժանի բարիքներն ու իդէալները պիտի նկատուէին — ներկայանում են այդ պոռնկացած սերնդի առջև իբրեւ ծաղրանքի և քրքիջի առարկայ:

Արդ, բնական չպէտք է լինէր, որ այսպիսով հայ ժողովուրդը, ընդհանուր առմամբ՝ անարդ անտարբերութեան ծայրագոյն աստիճանին հասած՝ երկրպագէր մատերիալիզմի բրուտալ (նիւթապաշտութեան անագորոյն) աւետարանին և մեռցնէր իւր մէջ կեանքի լուրջ բանական աշխարհահայեցողութիւն կազմելու տրամադրութիւնը, բնական չպէտք է լինէր, որ ինքնիշխանութիւնը ինքնակրթութիւնը, ինքնակառարկելութիւնը՝ յատկութիւններ և ձգտումներ, որոնք ինքնին յառաջ պիտի գային բանական աշխարհահայեցողութեամբ, փոխանակէին Մօլեշտի «der Mensch ist, was es isst» (մարդը է ինչ որ ուտում է) բեռախալ (անասնական) տե-

\* Das sittliche Bewusstsein, էր. 465.

սակէտին, և որովայնի պաշտամունքը դառնար նրա տենչերի և վախազների միակ նպատակակէտը:

Այդ տխուր երեւոյթի հետ սերտ կերպով կապուած է, ինչպէս ակնարկեցինք, մի ուրիշը՝ ժողովուրդի առողջութեան և գոյութեան խնդիրը, որ պիտի զբաղեցնէ ժողովրդի իւրաքանչիւր բարեկամին: Մսկեկան կերպով ձգտելով սխալ հասկացուած կեանքի բարեքններին՝ նրա հաճոյքներին ու վայելքներին, մարդը ոչ միայն կորցնում է համակերպուելու, այլ և վաշելելու ընդունակութիւնը, որը սահմանափակ է՝ մարդու նետրդերի որոշ յատկութեանց չնորհիւ, և այդպիսով կամ ուղղակի սպառում է իւր կեանքի ուժերը՝ կրճատում է իւր կեանքը, կամ քարշ է տալիս իւր դատարկ (blasiert) գոյութիւնը: Բայց այդ մոլեկան զուարճասիրութեան ծանր հետեւանքները չեն սահմանափակուում անհատական կեանքի մէջ, այլ ճակատագրական կերպով ներգործում են և չընդապառնի, ընդհանուրի առողջութեան և գոյութեան վրայ: Յատկանքը, կեանքի ձանձրոյթը և զրուանքը, բարքերի ապականութիւնը և կամքի թուլութիւնը՝ զուարճասէր կեանքի անճշդապրելի հետեւանքներն են: Իւրաքանչիւր վարմունք, իւրաքանչիւր գործողութիւն՝ այդ է ասում մեզ իրականութիւնը, որը փխտում է անհատական կեանքի պահպանութեան, առաջ է բերում օրդանի կամ օրդանիզմի հիւանդութիւն, անդգայութիւն և կորուստ, և այդ ներգործութիւնը տարածուում է անհատից, աւելի ուժեղ կերպով, սերունդների վրայ: Բնական և բարոյական իւրաքանչիւր խոտորում վրէժ է բուծում՝ յաջորդ սերնդի մէջ. հակաբնական կենցաղով առաջ եկած ախտերն ու ցաւերը ապահով և բարձր մտապատիկ կերպով անցնում են, ինչպէս ժառանգութիւն, նոր սերունդներին, հայրերի յոռի կեանքից ծնում են իրենց զաւակների մէջ այնպիսի հիւանդութիւններ, ինչպէս են նետրդոտութիւնը, հիւժախտը, սեռական հիւանդութիւններ, խելագարութիւն, կեանքի ձանձրոյթ, յուռեանութիւն, անձնա-

սպանութիւն և այլն, հիւանդութիւններ, որոնք յարատւելով և ընդհանրանալով՝ ամենալուրդաւոր կայութեան մէջ են գրնում ժողովուրդի գոյութիւնը: Նա անընդունակ է դառնում համակերպուելու դժուարին պայմաններին՝ անընդունակ է դառնում առողջ սերունդներ տալու, կամ տալիս է այնպիսի սերունդներ, որոնց գոյութիւնը կրկնակի վտանգաւոր է ժողովուրդի, հասարակական կազմի առողջութեան և գոյութեան համար: Ահաւասիկ ինչ է քարոզում մեզ ժառանգականութեան օրէնքը, ինչ է ուսուցանում մեզ բնութիւնը և կեանքը: Աւելորդ է յիշել անգամ, թէ ինչ մեծ դեր է խաղում անհատական կեանքը ժողովուրդի կեանքի մէջ, թէ մինչեւ որ աստիճան հասարակութեան գոյութիւնը կախուած է անհատի առողջութիւնից: Եթէ հասարակութիւնը մի օրդանիզմ է, ապա բնական է, որ անհատները, իբրեւ այդ օրդանիզմի անդամները, պայմանաւորէին նրա մարմնական և հոգեկան կազմակերպութիւնը և ներգործէին նրա նորմալ (բնական) կամ աննորմալ զարգացման վրայ: Ուստի մի հասարակութեան համար անտարբեր չի կարող լինել, թէ նրա իւրաքանչիւր անդամը իւր ուժերը պահպանում, թէ քայքայում է՝ լանսմը է տանում իւր մարմնական ու հոգեկան կարողութիւնների զարգացման մասին, թէ անգործունէութեան է մատնում՝ այդ ուժերը: Չի կարող անտարբեր լինել, վասն զի իւր իսկ գոյութիւնը կախուած է իւր ամենայնիւ առողջ, կրթովի, առկուն ուժի անդամներից: Հակառակ դէպքում նա չի կարող համակերպուել իւրաքանչիւր անգամ տրուած կեանքի պայմաններին և, վաղ թէ ուշ, կը քայքայուի:

Արդ, իրերի ներկայ դրութիւնը, որի մէջ դանդաղում է մեր ժողովուրդը, վտանգ չի սպառնում արդեօք նրա առողջութեան, չեն երևում արդէն հիւանդատ պալարներ նրա մարմնի վրայ: Մեր ժողովուրդը, որի իւրաքանչիւր անդամը ձգտում է որքան հնարաւոր է մեծացնել իւր զուարճութեան չափը, որի մէջ անբարոյականութիւնը հետզհետէ ներս է սուղում կեանքի բոլոր խորշերը՝

օրհասական դատաւիճիւմ չէ՞ պատրաստում իրեն համար ապագայում։ Այժմեան սեւ լունդը, որ առաւելու է անում ամէն բարոյական գաղափար, և փոխաբէնք, մինչև իսկ արհեստական կերպով, ստեղծում է իրեն համար զուարճութեան աղբիւրներ, չէ՞ ներգեւում, ու սպառում ժողովուրդի կենսական ուժերը, չէ՞ թունաւորում ազգայ սերունդներին առողջութիւնը՝ նրանց բաղդաւորութեան, բայց և բարոյական կեանքի հիմնական պայմանը։ Պէտք է ընդունել արդեօք, որ այժմեան սերունդը այնքան վթարում է հոգւով և մտքով, որ չէ նախատեսում իւր վարած կեանքի ծանր հետեւները և ոչ մի պատասխանատուութիւն չէ զգում իւր ուսերի ու խղճի վրայ. պէտք է ընդունել արդեօք, որ այդ սերունդը, որը մի բերան գոռում է՝ «Լնուլեան օրէնք», «Ժառանգականութիւն», «Էվոլյուցիա»՝ այնքան խուլ ու կոյր է, որ չէ լսում բնութեան ձայնը և չէ տեսնում նրա օրէնքները։—Այո, մարդիկ իւրացնում են ուսմունքների միայն կեղևը, և իսկական կորիզը մնում է նրանց բացարձակապէս օտար. նրանք չեն թափանցում խնդրի խորը՝ առարկայի էութիւնը ըմբռնելու համար, այլ բաւականաւորում են երեւոյթով, որը ստանում են առաջին իսկ հայեացքից։ Նրանք վերցնում են այդ ուսմունքներից միայն մի քանի բարձրակուց ֆորմներ, որպէս զի յետոյ թերեւ, ինչպէս ճշմարիտ նկատում է Ռիբինզը, արմատախիլ անեն դրանցով կրօնի և բարոյականութեան վերջին մնացորդները. ուսմունքի, զարգացման, քեօրիայի բարոյական բովանդակութիւնը մնում է նրանց անծանօթ։ Այդ չեն հաստատում արդեօք ժամանակակից երկրասարգները, դարձնելով իրենց կեանքը նշաւակ այն դիտութեան, որի անունով բարբառել գիտեն։ Սակայն, եթէ դրանք փոխանակ բարբառելով՝ թէօրիաները մեկգի թողնէին և ունակութիւն դարձնէին իրենց շուրջը բնութեան և կեանքի մէջ կատարուող երեւոյթները մտադրութեամբ գիտելու, ինչպէս դարեր ստա՞ծ և ներկայումս անում է ժողովուրդի առողջ միտքը, առանց իսկ գաղափար ունենալու ժառանգա-

կանութեան և էվոլյուցիայի օրէնքների մասին (որոնց էութիւնն ու գործնական նշանակութիւնը շատոնց արմատացած է ժողովուրդների հասկացողութեան մէջ), այլ միայն հիմնուելով կեանքի և պատմական փորձառութեան վրայ՝ թերեւս աւելի յարգելին բնական և բարոյական օրէնքները, քան թէ այժմ, երբ սառն, խոհական դիտողութիւնը տեղի է տուել չոր ու ցամաք մտքերի ֆրազային իւրացումին։

Ամբիոնում ենք մեր խօսքը։ Մեր ժողովուրդը բարոյապէս հիւանդ է՝ մի հանգամանք, որն ինչպէս մի երկանաբար պիտի ճնշէ իւրաքանչիւր բարոյական մարդու և ժողովուրդի բարեկամի սրտի վրայ։ Մեր բարբերը ստացել են այնպիսի մի կերպարանք, որի վրայ մատերի արանքով նայելը ամենամեծ սճրագործութիւնն է։ Ժողովուրդի առողջութիւնը և ապագան ինքնին պէտք է մեղմից պահանջէ աւելի խիստ վերաբերմունք գէպի նրա մեղքերն ու յանցանքները, պէտք է պահանջէ աւելի խիստ բարոյականութիւն, և ոչ պատշաճաւոր կեցութեան այն պայմանական բարոյականութիւնը, որը կեցատուութիւնների քողարկելու մի խայտառակ միջոց է։ Մեր իրականութիւնը պէտք է խմորէ իւր մէջ մի ուժեղ րէակցիա՝ մի հակալիւ հոսանք, եթէ մեր ժողովուրդին չէ վիճակուած գերեզման գտնել իւր մեղքերի և ապականութիւնների մէջ։ Մեզ պէտք է մի Սալօնարուա, որ ցնցէ գոփարի զաւակներին, մի բարոյագէտ, որ պատուաստէ բարոյական հասկացողութիւնների նոր ըմբռնումներ, նոր ուղղութիւն։

—Մարդ չէ կարողանում զսպել իւր զարմանքը, տեսնելով թէ մեր մամուլը որքան քիչ՝ գրեթէ ամենին չէ զբաղւում այն խնդրով, որ կոչւում է ժողովուրդի բարոյականութիւն, մինչդեռ այդ ամենակենսական խնդիրն է մեր ժողովուրդի համար՝ նրա կեանքի և մահուան խնդիրը։ Զգիտենք մեր հրապարակախօսները ինչ դեր են կամենում տալ լրագրութեան մեր մէջ, սակայն կարծում ենք, քանի որ մեր ժողովուրդը՝ մեծ զրկանա իւր, ամէն անունդ նրանից է քաղում, պէտք է նա աւելի կրթող և գաստիա-

բախող պաշտոն ունենայ։ Ոչ թէ «ժամանակա-  
կեց» անմիա հոգեբով բռնուած ի վաճառ  
պէտք է հանէ նա ամէն ինչ, որ հանգիւտում  
է, այլ այն, ինչ որ պահանջում է ժողովուրդի  
ներկայ կեանքը, նրա կարիքները, նրա  
միջավայրը՝ ինչ որ անմիջական կերպով կապ  
ունի նրա առողջութեան և կանոնաւոր դար-  
գացման հետ։ Ժողովուրդի ներկայ ամե-  
նամեծ պահանջը, որ էրեւի չուի խե-  
լահաւ և աքաղաղ մարդ չի ուրանալ՝  
նրա բարոյական հիւանդութեան բուժումն  
է և նրա բարոյական կեանքի հաստատու-  
թիւնների ամրացումը։ Ի՞նչ պիտի կատարէ  
մամուլը, մի պարզ պարտաւորութիւն՝ քնն-  
նել, ուսումնասիրել ժողովուրդի բարոյական  
հիւանդութեան և անկման պատճառները և  
գտնել միջոցներ վերականգնելու նրա ա-  
ռողջութիւնը, որքան այդ հնարաւոր  
կարող է լինել։ Բայց այդ բոլորի մասին  
շատ քան չէք գտնիլ մեր մամուլի մէջ։ Իրաւ  
է, նա խօսում է մեր ժողովուրդի ընկած դրու-  
թեան մասին, բայց ինչպէս նարունակ լոյս  
են տեսնում յօդուածներ, որոնք շօշափում  
են ժողովուրդի բարոյական վերքերը, բայց  
մէկը միտից անորոշ, անբովանդակ։ Վերջը-  
րէք օրինակ «Մշակը», կարգացէք Լէօնի  
«Վիրակնօրեայ գրոյցները», և դուք կգտնէք  
այնտեղ սովորաբար տափակ արախօսութիւն-  
ներ, թափթիփուկ մտքերի կոյտեր միայն։  
Առարկայի հոգեբանական վերլուծութեան  
մէջ Լէօն հօ անդուգական է։ Նա դադա-  
փարների հետ խաղում է, ինչպէս մանու-  
կը իւր խաղաղնոտակների հետ։ Մոլեգին  
ողեւորութեամբ «մտրակում է» նա ժողովուրդի  
պակասութիւնները, «երեւան է հանում» նրա  
ցաւերը, բայց ի՞նչ է իսկապէս այդ ողեւորու-  
թիւնը, որտեղ է նորա աղբիւրը։ Մի անգամ  
ժողովուրդը ներկայացնում են իբրեւ շահա-  
մոլ, մի ուրիշ անգամ հարստահարեալ, մի այլ  
անգամ նիւթապաշտ՝ անտարբեր, անկա-  
րեկից, հասարակական բնաղդներից զուրկ,  
անգիտ, մեռած և այլն և այլն։ Բայց մո-  
ռանում են, ու հասկանալ չեն կամենում,  
որ այդ բոլորի պատճառը ժողովուրդի սրտի  
և ոգու վտուրթեան մէջ, նրա անբարոյա-  
կանութեան մէջ պէտք է որոնել։ Եւ փո-

խանակ լրջօրէն քննելու և հետախուզելու  
նրա բարոյական ծիրութեան աղբիւրները  
և գտնելու դրանց դարմանը՝ իմաստակ փի-  
լիսոփայութիւններ են անում, ալ ու ձախ  
լուսանքների ու հայհոյանքների տեղատա-  
րափ արձակում։ Եւ պէտք է դարմանալ,  
որ դժբա հրով ու սրով ապառնում են նրանց,  
որոնք ժողովուրդի անկումը փորձում են  
խրխկական պատճառների մէջ որոնել։ «Արա-  
քառի» վերջին համարի մի յօդուածում  
այն միտքն էր յայտնուած, որ մեր ժողո-  
վուրդը ներկայումս աւելի կարիք ունի հօ-  
գեկան, քան նիւթական բարիքների՝ մի  
միտք, որը որքան ճշմարիտ է՝ նոյնքան էլ  
անհերքելի։ Բայց տեսէք որ Լէօն սխալ է  
գտնում և այդ միտքը, ու ահաւասիկ  
ինչ է ասում։ «Ներկայ ժամանակներում, աղ-  
գերի սրարշաւ առաջագիմութեան, կուլտու-  
րական մրցութիւնների ժամանակում՝ երբ մի  
օրով ուշացողը դատապարտուած է ուրիշ-  
ների օտների տակ տրորուելու, հայոց խեղճ  
ժողովուրդը, տղիտութեան ճանկերի մէջ  
տանջուող այս նահատակը ինչեր է լսում»  
(Մուրճ, № 9 «Կղերական սովեստութիւն-  
ներ»)։— Կարո՞ղ է արդեօք մի օգուտ բերել այս  
ինքնատիպ սովեստութիւնը։ «Ժամանակակից  
սրարշաւ առաջագիմութիւն», «կուլտուրա-  
կան մրցութիւններ»։— Ինչ տղայական և ան-  
միտ ֆրագներ են դժբա։ Բաւական չէ արդեօք  
վերջ տալ դադափարների այս բռնաբարումին։  
Բացատրեցէք ժողովուրդին նախ՝ սրն է «առա-  
ջագիմութիւնը» և «կուլտուրական մրցութիւ-  
նը», և ապա պահանջեցէք, յորդորեցէք որ  
հետեւեն ձեզ, քանի որ Ձեզ «նուիրել էք ժողո-  
վուրդին ծառայելու դժբին, աշխատում էք  
նրա համար, ձեր իրէպը նրա առաջագիմու-  
թիւնն է, ձեր մխիթարութիւնը— նրա բարօ-  
րութիւնը»\*։ Բայց արդեօք չէք սխալում

\*. Պարոնի վերջին «կիրակնօրեայ գրոյցի»  
դո՞ւար մտքերիցն են. «Մենք մեզ նուիրել ենք ժո-  
ղովուրդին ծառայելու գործին, աշխատում ենք  
նրա համար, մեր իրէպը նրա առաջագիմութիւնն  
է, մեր մխիթարութիւնը— նրա բարօրութիւնն է»  
Ս, դուք ամէն ինչ էք, դուք էք միայն ժողովուր-  
դին ծառայում։ Ողորմիկներ, եթէ դուք ձեզ հա-  
մար դափնիներ չհիւսէք, ապա ո՞վ պիտի հիւսէ։

ձեր ծառայութեամբ, որը յանուն յառաջագիւ-  
մութեան նուիրում էր ժողովուրդին: արդեօր  
այդ յառաջագիւմութիւնը հիւանդօտ չէ: Թե-  
րևս կարծում էր, որ ամէն ինչ յառաջագիւ-  
մութիւն է, ինչ որ ընդունում էր արեւմուտքից,  
և կուլտուրական մրցութիւն ասելով հասկա-  
նում էր այն արհեստը, որը նորացնում է  
մարդկանց անորժական ու ճաշակը: Այդ ամե-  
նից կարող էր ապահով լինել, մեր ժողովուրդը  
լափից դուրս շատ ունի. եթէ ձեր շարու-  
նակ քարոզած յառաջագիւմութիւնն էլ այն  
է, որը հասկանում է այսօր մեր սերունդը—  
այսպէս ելով և հեղեղելով ամէն սրբութիւն  
և բարոյական դադափար, պատիւ ձեզ. այդ  
մասին էլ պարծենալու իրաւունք ունիք,  
որովհետեւ յաղթանակը ձերն է: «Կուլտու-  
րան», «գիտութիւնը», — այդ ճշմարտութիւնը  
օղ պիտի շինէր և ձեր ականջներից կա-  
խէր, — որոնց անունով միշտ խօսում էր, բայց  
առանց հասկանալու և հասկացնելու ինքն  
բոս ինքեան ոչ լաւ են և ոչ վատ, ոչ չա-  
րիք են և ոչ բարիք: Մէկը կամ միւրը դառ-  
նում են նրանք մարդու ձեռքին, նայելով ի-  
րանց կիրառութեանը. նրանք երկապրի սրեր  
են՝ որ կարող են բերել օրհնութիւն և անէծք:  
Կուլտուրան առանց բարոյականութեան կըս-  
տեղծէ միայն նուրբ վայելքներով և հա-  
ճոյքներով լի մի կեանք, որոնցից դէպի  
կորուստը մի քայլ է միայն: Ապա որքան ա-  
պուշ պէտք է լինել չհասկանալու համար,  
թէ «ուրիշների տոների տակ դատապար-  
տուած է տրորուելու» ոչ թէ այն ժողո-  
վուրդը, որը վարպետ չէ գազանային մըր-  
ցութիւնների մէջ, նրբաճաշակ չէ իւր կեն-  
ցադաժարութեան մէջ, այլ այն ժողովուրդը,  
որը կորցրել է ինքնայարգութիւնը, բարո-  
յական արիւթիւնը, ազգայնական ոգին,  
յարգանք դէպի բարոյական ֆարքորները,  
պահանջ դէպի հոգեկան կեանքը, հաւատք  
դէպի իդէալը: Սրանք յատկութիւններ են,  
որ կարող է ունենալ մի ոչ կուլտուրա-  
կան ժողովուրդ՝ ինչպէս և կարող է չունե-  
նալ ամենակուլտուրական մի ազգ: Շատ  
ազգեր ոչնչացել են հակառակորդների ու-  
ժի տակ սրի դօրութեամբ, բայց կուլտու-  
րական ազգերը ջնջուել են միայն իրենց

արհեստական (որ կուլտուրայի պոռնն է),  
զգայական և զուարճասէր կեանքով:

Մեր ազգը աւելի ուժեղ, և համեմատա-  
բար բարձր, կուլտուրական ազգերի հետ չըփ-  
ուելով և ազդելով պահպանել է իւր գոյութիւ-  
նը. «տրորուել է», ճիշտ է, ուրիշների տոների  
տակ, բայց չէ ջնջուել, չէ կորցրել իւր ինք-  
նուրոյնութիւնը, և այդ ոչ թէ «կուլտու-  
րական մրցութիւնների» մէջ աջողակ լինե-  
լուն համար, այլ այն պատճառով որ նա,  
հայ ժողովուրդը, ինչպէս մի անհատ ապրել  
և շնչել է մի հոգւով, նրա անդամները վե-  
րաբերուել են ժողովուրդի մարմնոյն, ինչ-  
պէս ոտը ծառին, որը պոկուելով, պիտի  
չորանայ. նրանց կապել է իրար հետ մի  
սրբաղան կապ՝ «մի աւաղանի զաւակ ենք»  
բառերով հիստուած խորհրդաւոր կապը:  
Ի՞նչ է ներկայացնում կուլտուրական ժա-  
մանակներում ապրող հայ ժողովուրդը . . .  
Ընթերցողը չպէտք է մտածէ հարկաւ, թէ  
մենք դէմ ենք կուլտուրային. երբէք: Քարո-  
ղեցէք կուլտուրայ, որքան կուղէք, բայց պա-  
հանջեցէք, որ այդ կուլտուրան բարոյական  
լինի: Առանց բարոյական բովանդակութեան  
նա ամենապատանդաւոր թոյնն է ազգերի  
գոյութեան համար:

Ա. ՏԵՐ-ՂԱՍԿԱՐԻԱՆ:

### — ՈՍՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ —

Մեր բանաստեղծներից ամենից տաղան-  
դաւորը և ամենից ժողովրդականը՝ անկուտ-  
կած Ռ. Պատկանեանն է: Նոր-Նախիջևանի  
Ս. Խաչ վանքի դպրութեամբ բանաստեղծի չիբմի  
ժրոյ արձան կանգնեցնելը՝ պ. Զալսուշեանի  
նախաձեռնութեամբ և ազգային ժողովարա-  
րութեամբ՝ պարբերական մամուլին լաւ առիթ  
տուեց հանդուցեալի յիշատակը նորից նոր  
արձարձելու: Ընտելով նրա արժանաւորու-  
թիւնները, հայ գրականութեան մատուցած  
ծառայութիւնները և մինչև իսկ ջանալով  
որոշել նրա տաղանդի չափը և այն պատուա-  
ւոր տեղը, որ բռնելու է բանաստեղծը մեր  
նոր գրականութեան մէջ: